Նարեկ Սարգսյան

Երկխոսություն ճակատագրի հետ

Նայում ես ինձ ու քմծիծաղ տալիս,

Ուզում ես ասել, որ ոչինչ էլ չի փոխվի:

Գիտեմ՝ դու քեզ հաղթած ես համարում,

Բայց դեռ խաղն ավարտված չէ

Ու ամեն պահի դու կարող ես ջախջախվել:

Այս ողջ տարիներին դու ջանք ու եռանդ

Չես խնայել կյանքս թունավորելու համար:

Այս ողջ տարիներին քո անմիջական ցուցումով

Ի վնաս ինձ են դասավորվել կյանքիս իրադարձությունները:

Այս ողջ տարիներին մարդկանց հանիրավի իմ դեմ ես հանել:

Դու արդեն պարտված ես, բայց հիմա չես հասկանում,

Դու այդպես էլ չգիտակցեցիր, որ անհնար է հաղթել

Այն մարդուն, ով գիտի իր կյանքի առաքելությունն ու

Մեր ունի սրտում ողջ մարդկության հանդեպ:

Պարզապես դու հիմա քո պարտությունը չես տեսնում,

Որովհետև անկարող ես տեսնել իրադարձությունների

Զարգացման օրինաչափությունների ներքին խմորումները:

Դու շարունակ դաշնակցել ես <<հավանականության տեսության>> հետ,

Որպեսզի ինձ ցավեցնես ու դառնացնես,

Բայց նա հիմա քո օգտին էլ չի կարող աշխատել

Մաթեմատիկական օրենքներն այլևս թույլ չեն տալիս:

Դու շատերին խաբել ես,

Թե նրանք կարող են քեզ կառավարել

Վերջիններս էլ հավատացել են ու քո ծուղակն ընկել:

Ես արդեն քեզ լավ ուսումնասիրել եմ

Իմացել քո էության գաղտնագրերը:

Միայն համառությունը և աշխատասիրությունը

Բավարար չեն քեզ հաղթելու համար

Ամենակարևորը մտքի ու վարքագծի մանիպուլացիան են,

Որոնցով պետք է խառնել խաղաքարտերդ,

Ամենակարևորն սկսածս գործը սիրելն ու այն

Ամեն գնով ավարտին հասցնելն է,

Ինչքան էլ դա անիրական թվա:

Դու պարտված ես,

Պարզապես փառքիցդ կուրացած՝

Չես տեսնում մոտալուտ տապալումդ:

Ես գիտեմ, թե ո՛րն է լինելու քո

Վերջին հուսահատ ու ստոր քայլը,

Բայց ես դրան էլ եմ պատրաստ:

Պատրաստ եմ դրան, քանի որ

Ապրածս տարիների փորձն ինձ սովորեցրել է

Թե ինչպես կարող եմ կյանքիս աղբը

Վերափոխել ադամանդի:

Սա արդեն քո երաշխավորված պարտությունն է:

Այնպես որ բավ է չարախնդաս

Ու քմծիծաղ տաս,

Այլ պարզապես ընդունի՛ր պարտությունդ

Ու գլուխ խոնարհի՛ր իմ առջև:

28 . 05 . 2025թ Մեղրի